



ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«10» Նոյեմբեր 2022թ.

ՀՐԱՄԱՆ N 563-շ

«ՎԻՋ ԷՅՐ ՀԱՆԳՐԻ» ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «Ձ» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 1 հավելվածի 19-րդ կետով և հիմք ընդունելով «Վիզ Էյր Հանգրի» ավիաընկերության 2022 թվականի նոյեմբերի 4-ի հայտը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Վիզ Էյր Հանգրի» ավիաընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Վենետիկ/LIPZ/-Երևան/UDYZ/-Վենետիկ/LIPZ/ երթուղով՝ 2023 թվականի հունվարի 12-ից մինչև 2023 թվականի մարտի 25-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն:

2. Նկատի ունենալով, որ Ընկերությունը օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ձմեռային ժամանակահատվածում 2023 թվականի հունվարի 12-ից մինչև 2023 թվականի մարտի 25-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ Վենետիկ/LIPZ/-Երևան/UDYZ/-Վենետիկ/LIPZ/ երթուղով Հայաստանի Հանրապետություն

տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացմամբ բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմաններին, չսպասարկված ուղղությունների և չվերթերի հաճախականությունների պահանջներին՝ սույն կետում նշված Երևան/UDYZ/-Վենետիկ/LIPZ/ երթուղով մեկնող ուղևորներին տրամադրվող «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով սահմանված արտոնության սկիզբ սահմանել 2023 թվականի հունվարի 12-ը՝ 36 ամսով:

3. Օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ամառային ժամանակահատվածի մասով արտոնության վերաբերյալ դրույթները կսահմանվեն առանձին հրամանով՝ Ընկերության կողմից ներկայացվող հայտի հիման վրա:

4. Կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվության տեղադրումը Կոմիտեի պաշտոնական կայքէջում:

5. Կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվության հանձնումն Ընկերությանը:

11/10/2022

X 

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ


ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 203/2022
 ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱԿՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ
 ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 203/2022
 TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR SCHEDULED AIR
 SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA

Օդանավ շահագործողը Aircraft Operator	«Վիզ Էյր Հանգրի» ՍՊԸ "Wizz Air Hungary" LLC
Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը) Type(s) of aircraft(s)	A320 (320, Y180), A320 (320, Y186), A321 (321, Y230), A320neo (32N, Y186), A321neo (32Q, Y239)
Հաճախականությունը Frequency	շաբաթական 2 չվերթ 2 flights per week
Երթուղին Air route	Վենետիկ/LIPZ/-Երևան/UDYZ/-Վենետիկ/LIPZ/ Venice/LIPZ/-Yerevan/UDYZ/-Venice/LIPZ/
Թույլտվության գործողության ժամկետը Permission validity	12/01/2023 մինչև 25/03/2023 12/01/2023 till 25/03/2023

ՔԱՂԱՔԱՏԻԱԿԱՆ
 ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ
 ՆԱԽԱԳԱՀ
 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐԱՅՆ
 CHAIR OF CIVIL
 AVIATION COMMITTEE
 MIHRAN KHACHATRYAN

11/10/2022



10.11.2022
 (տալու ամսաթիվը)
 (date of issue)